ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<01 >> ապրիլ 2015 N 32

ք. Եղեգնաձոր

<<ՀՌԻՓՍԻՄԵ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 81 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի, 67-րդ հոդվածի 1-ին կետի <<ա>> և <<ը>> ենթակետերի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 41-Ա որոշման 1-ին կետի պահանջի.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. <<Հռիփսիմե առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության 2 198 000 (երկու միլիոն հարյուր իննսունութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ կազմող կանոնադրական կապիտալը նվազեցնել 2 197 999 (երկու միլիոն հարյուր իննսունյոթ հազար ինը հարյուր իննսունինը)

Հայաստանի Հանրապետության դրամով՝ 2 197 999 (երկու միլիոն հարյուր իննսունյոթ հազար ինը հարյուր իննսունինը) հասարակ (սովորական) բաժնետոմսերի հետգնման և մարման միջոցով: Ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցումից հետո կկազմի 1 Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1 հասարակ (սովորական) բաժնետոմս 1 Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2000 թվականի նոյեմբերի 30-ի <<Մարզպետարանի ենթակա ՊՓԲԸ-ների վերագրանցման մասին>> N 81 որոշմամբ հաստատված <<Հռիփսիմե առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2-րդ կետը հաստատել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Հանձնարարել <<Հռիփսիմե առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ դիմել պետական ռեգիստրի գործակալություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման համար:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Խաչիկ Գևորգյանին:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված

ՀՀ Վայոց ձորի մարզպետի՝ 2015թ.

ապրիլի 1-ի թիվ 32 որոշման

<<Հռիփսիմե առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2 կետ

<<4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է մեկ Հայաստանի Հանրապետության դրամ, որը կազմում է մեկ հատ հասարակ (սովորական) բաժնետոմս՝ մեկ Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով :>> :

Աշխատակազմի ղեկավար՝ **Կ. ՍԱՀԱԿՅԱՆ**